

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28579  
Ապրիւ 4, 1984

Արժանաշնորհ

Տ. Առնակ Ա. Քհնյ. Գասպարեան  
Հովհաննես Մամայն Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
թէնէֆլայ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք Փետր. 27, 1984 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետր. 5ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը ինդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու զիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռածայնի թիւերը:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Պետրոս Աճէմեան  
Գարեգին Պետրոսեան  
Կրէյս Յակոբեան  
Արաքսի Բարսեղեան  
Վերժին Վիքթորիա